

## ՏԵՂԵԿԱՆՔ

*Եվրոպական Միության «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME) (2014-2020թթ.)» (Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises (COSME, 2014 to 2020)) ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ*

### **1. Ինչ է CoSME ծրագիրը և որ երկրներն են անդամակցում**

“Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises (COSME, 2014 - 2020)” ծրագիրը ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որը հասանելի է ԵՄ անդամ երկրներին և Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) մեջ ընդգրկված երկրներին, այդ թվում նաև Հայաստանին:

Ծրագրի բյուջեն 2014-2020թթ. համար կազմում է 2.3 մլրդ եվրո: Ծրագիրն ուղղված է ՓՄՁ ոլորտի զարգացմանն ու ՓՄՁ-ներին ուղղակի աջակցությանը հետևյալ ուղղություններով.

- շուկաների հասանելիության ապահովում,
- ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովում,
- ձեռներեցության խթանում՝ ձեռնարկատիրական կրթություն, գործարար միջավայրի բարելավում, երիտասարդների և կանանց ձեռներեցության խթանում,
- ՓՄՁ-երի մրցունակության զարգացման համար ավելի բարենպաստ պայմանների ապահովում:

Ծրագրի հիմնական շահառուներն են հանդիսանում ՓՄՁ սուբյեկտները, անհատ ձեռնարկատերերը, գործարարության աջակցման կազմակերպությունները և տարածքային ու ազգային զարգացման մարմինները:

Ծրագրի տևողությունը 7 տարի է: Այն մեկնարկել է 2014թ. հունվարի 1-ից և կշարունակվի մինչև 2020թ.:

Ծրագրին անդամակցելու համար անհրաժեշտ է ստորագրել COSME ծրագրին անդամակցության վերաբերյալ համաձայնագիր ԵՄ և ՀՀ միջև և յուրաքանչյուր տարի վճարել անդամավճար:

Անդամավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր երկրի համար անհատականորեն՝ հիմք ընդունելով տվյալ երկրի ՀՆԱ-ն:

### **2. Հայաստանի մասնակցության պայմանները COSME ծրագրին**

ԵՄ-ի կողմից Հայաստանին առաջարկվում է մասնակցության 2 տարբերակ՝

- մասնակի մասնակցություն (առանց ֆինանսական բաղադրիչի<sup>1</sup>), որի մասնակցության տարեկան վճարը կազմում է շուրջ 78 հազար եվրո:
- ամբողջական մասնակցություն, որի մասնակցության տարեկան վճարը կազմում է շուրջ 188 հազար եվրո:

ՀՀ կառավարությունը ս.թ. հուլիսի 30-ի N 841-Ս որոշմամբ արդեն իսկ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME) (2014-2020 թվականներ)» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը՝ հաշվի առնելով Ծրագրին մասնակցության վճարի հատկացման հնարավորությունը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցների հաշվին: Համաձայն համաձայնագրի նախագծի 2016թ. համար մասնակի մասնակցություն (առանց ֆինանսական բաղադրիչի) վճարը կկազմի 78,868 (յոթանասունութ հազար ութ հարյուր վաթսուներեք) եվրո:

Միաժամանակ, ՀՀ և ԵՄ պատվիրակության հետ ընթացող քննարկումների արդյունքների համաձայն՝ 2015թ. ընթացքում մեկնարկող մեկ այլ՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված ծրագրի շրջանակներում նախատեսվում է COSME Ծրագրի անդամակցության վճարի համաֆինանսավորում մինչև 50% չափով՝ 3 տարի ժամկետով: Նշված ծրագիրը Հայաստանում համակարգող Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպությունը (GIZ) պատրաստակամություն է հայտնել նաև Ծրագրի իրականացման ընթացքում ճիշտ և որակյալ հայտեր կազմելու ուղղությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրել տեխնիկական աջակցություն, որը Ծրագրի իրականացման դրական ընթացքի համար կարող է ստեղծել նպաստավոր պայմաններ:

Ընդհանուր առմամբ ծրագիրը չի ենթադրում անդամավճարը դիտարկել որպես ներդրում և ակնկալել ծրագրերի տեսքով անդամավճարի գումարի հետ վերադարձ, սակայն ՓՄՁ աջակցող հայաստանյան կազմակերպությունները հնարավորություն են ստանում մասնակցել COSME ծրագրի շրջանակներում հայտարարվող բազմաթիվ բաց դրամաշնորհային մրցույթներին:

---

<sup>1</sup> Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բաղադրիչի շրջանակներում առաջարկվում են հետևյալ գործիքները՝ վարկային երաշխավորությունների տրամադրում (ուղղակիորեն ՓՄՁ սուբյեկտներին և վարկային երաշխավորություններ տրամադրող միջնորդ կազմակերպությունների միջոցով) և կապիտալի ֆինանսավորում զարգացման փուլում գտնվող ՓՄՁ-ների համար: Կապիտալի ֆինանսավորումը կիրականացվի վենչուրային հիմնադրամների միջոցով:

## **1. COSME ծրագրին մասնակցության դիմաց հնարավոր օգուտները Հայաստանի համար**

Անդամակցելով COSME ծրագրին Հայաստանի ՓՄՁ հատվածը առավելապես կներգրավվի ԵՄ-ում ընթացող ՓՄՁ հատվածին ուղղված գործընթացներին և հնարավորություն կստանա օգտվել Եվրամիության կողմից ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված բազմաթիվ նախաձեռնություններից:

Ներկայումս COSME-ի պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվում են մրցույթի հայտարարություններ ([http://ec.europa.eu/enterprise/contracts-grants/calls-for-proposals/index\\_en.htm](http://ec.europa.eu/enterprise/contracts-grants/calls-for-proposals/index_en.htm)): Մրցույթների բովանդակությունները ներառում են ինչպես ԵՄ երկրների, այնպես էլ երրորդ երկրների բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված ծրագրեր:

Ստորև բերված են COSME ծրագրի շրջանակներում հայտարարվող մրցույթների օրինակներ.

- Ձեռնարկությունների եվրոպական ցանց,
- ERASMUS երիտասարդ ձեռնարկատերերի համար,
- Աջակցություն զբոսաշրջության ոլորտի մրցունակ և կայուն աճին,
- Ձեռնարկատիրական կրթություն (համա-եվրոպական ձեռնարկատիրական ուսուցման նախաձեռնություն),
- Կլաստերների միջազգայնացում,
- Կին ձեռնարկատերերի եվրոպական ցանց,
- Ավագ ձեռնարկատերեր. Լավագույն փորձի փոխանակում,
- և այլն:

## **2. COSME ծրագրին մասնակցության դիմաց հնարավոր օգուտները Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համար**

Հայաստանի մասնակցությունը COSME ծրագրին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորություն կտա համաֆինանսավորում ստանալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ)<sup>2</sup> գործունեության շրջանակներում՝ էականորեն բարձրացնելով Հայաստանում վերջինիս գործունեության արդյունավետությունը, դիմել ամենամյա ERASMUS երիտասարդ ձեռներեցների ծրագրին և ձեռներեցության

---

<sup>2</sup> ՁԵՑ-ն իր գործունեությունը մեկնարկել է 2008թ.ից և իր մեջ է ներառում ավելի քան 60 անդամ երկրների շուրջ 600 գործընկեր կազմակերպություններ՝ տրամադրելով բազմաթիվ մասնագիտացված գործարար ծառայություններ իր շահառու կազմակերպություններին: ՁԵՑ-ին անդամակցում են առևտրաարդյունաբերական պալատներ, համալսարաններ, գիտական կենտրոններ, ՓՄՁ աջակցող կառույցներ, գործակալություններ  
[/http://een.ec.europa.eu/:](http://een.ec.europa.eu/)

խթանման այլ նմանատիպ ծրագրերին, ինչպես նաև հնարավորություն կտա հայաստանյան այլ կազմակերպություններին և առանձին ՓՄՁ սուբյեկտներին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջամտությամբ մասնակցել Ծրագրի շրջանակներում հայտարարվող բազմաթիվ բաց դրամաշնորհային մրցույթներին:

Անդրադառնալով Հայաստանում ՁԵՑ գործունեության հարցին՝ անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել, որ ներկայումս Հայաստանը ՁԵՑ-ին անդամակցում է որպես երրորդ երկիր, որի գործունեությունը չի համաֆինանսավորվում ԵՄ կողմից՝ ՓՄՁ-երի համար էականորեն սահմանափակելով ցանցի ծառայություններից օգտվելու հնարավորությունները, սակայն Ծրագրի շրջանակներում Եվրոպական Հանձնաժողովի կողմից հայտարարված COSME Ծրագրի շրջանակներում ՁԵՑ-ի 2015-2020թթ. համակարգում ընգրկվելու մրցույթին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ներկայացված ծրագրային առաջարկը արդեն իսկ ստացել է դրական գնահատական, և Եվրահանձնաժողովի կողմից **ս.թ. ապրիլի 9-ին** ստացված պաշտոնական գրությամբ առաջարկվել է կնքել դրամաշնորհային համաձայնագիր, որը սակայն ուժի մեջ կմտնի COSME ծրագրին Հայաստանի մասնակցության դեպքում: Սա նշանակում է, որ Ծրագրին անդամակցելու դեպքում Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության համաֆինանսավորումը կլինի երաշխավորված առաջիկա 5 տարիների ընթացքում: Ներկայումս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ-ին անդամակցում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀԳԱԱ) հետ համագործակցությամբ: Վերջինս կոչված է խթանելու տեղական ՓՄՁ-ների մասնակցությունը ԵՄ գիտահետազոտական ծրագրերին, նպաստելու առաջավոր գիտատեխնիկական նվաճումների կիրառելիությունը ձեռնարկատիրության ոլորտում, հայաստանյան գիտնականների մասնակցությունը ԵՄ հետազոտական ծրագրերում և այլն:

Ներկայումս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը դրամաշնորհային համաձայնագրի ստորագրման փուլում է: ՁԵՑ-ի համաֆինանսավորման ծրագրային առաջարկը նախահաշվի հետ միասին արդեն իսկ ներկայացվել է **ս.թ. հունիսի 25-ին**, որը դեռևս պետք է հաստատվի Եվրահանձնաժողովի կողմից:

ՁԵՑ-ի հիմնական նպատակն է նպաստել հայ գործարարների միջազգայնացմանը և եվրոպական շուկա մուտք գործելու հնարավորությունների ընդլայնմանը, նրանց նորարարական կարողությունների զարգացմանը և տեխնոլոգիական կատարելագործմանը:

Ծրագրի իրականացումից ակնկալվող հիմնական արդյունքներն են.

- **Հայ գործարարների տեղեկացվածության մակարդակի բարձրացում** ԵՄ քաղաքականության, օրենսդրության, ստանդարտների, ֆինանսավորման հնարավոր աղբյուրների, գործարար համագործակցության

հնարավորությունների, շուկայի, արտահանման/ներմուծման ընթացակարգերի, սարքավորումների, մատակարարների, ապրանքների գների և ԵՄ այլ ընդհանուր հարցերի վերաբերյալ: Տեղեկատվության հասանելիությունը կապահովի առանձին **EEN-Armenia** կայքի և սոցիալական ցանցերի միջոցով, պարբերաբար թողարկվող տեղեկաթերթերի, էլ. նամակների, սեմինարների, հանդիպումների և հեռուստահաղորդումների միջոցով: Ընդհանուր օգտվողների թիվը կկազմի շուրջ 30000:

- ***Միջազգայնացման և նորարարական ներուժ ունեցող հայ գործարարների կարողությունների զարգացում:*** Ընտրված շուրջ 260 ՓՄՁ սուբյեկտներ կստանան անհատական խորհրդատվություն և կմասնակցեն մասնագիտացված դասընթացների, կմշակվեն ներդրումային ծրագրեր: Անհատական աշխատանք կիրականացվի առավել իրատեսական ծրագրեր ունեցող ՓՄՁ-ների հետ նրանց միջազգայնացման պլանների իրագործման ուղղությամբ:
- ***Աջակցության ցուցաբերում արտերկրում հուսալի գործընկերների որոնման և համագործակցության հաստատման հարցում:*** Շուրջ 125 հայաստանյան ՓՄՁ-ների համար գործարար/տեխնոլոգիական համագործակցության առաջարկների մշակում և տեղադրում ԵՄ գործարար և տեխնոլոգիական համագործակցության համընդհանուր հիմնապաշարներում, որը հասանելի է ավելի քան 60 երկրներում: Ընդհանուր առմամբ կապահովվի շուրջ 250 հայաստանյան ՓՄՁ-ների գործարար/տեխնոլոգիական համագործակցության առաջարկների մշտական առկայությունը հիմնապաշարում: Կապահովվի շուրջ 70 հայ գործարարների մասնակցությունը ՁԵՑ-ի միջոցով կազմակերպվող միջազգային գործարար համագործակցության միջոցառումներին, գործարար հանդիպումներին: Աջակցություն կցուցաբերվի նաև բանակցությունների վարման և համագործակցության համաձայնագրերի կնքման գործընթացներում: Ակնկալվում է առնվազն 20 հաստատված նոր համագործակցություն:
- ***Աջակցության ցուցաբերում նոր տեխնոլոգիաների փոխանցման, գիտական մշակումների զարգացման, համատեղ հետազոտական և փորձարկման աշխատանքների իրականացման, կոմերցիալիզացիայի հարցերում:***

Համաձայն ներկայացված տարբերակի՝ Ծրագրի բյուջեն 2 տարիների համար

կազմում է շուրջ 316 հազ եվրո, այդ թվում՝ Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի բյուջեն կազմում է 256 հազ. եվրո, իսկ ՀՀԳԱԱ-ինը՝ 60 հազ. եվրո: Ծրագիրն իրականացվելու է համաֆինանսավորման սկզբունքով և նշված բյուջեի միայն 60%-ն է տրամադրվելու ԵՄ-ի կողմից որպես դրամաշնորհ: Այսինքն դրամաշնորհը կկազմի 190 հազ. եվրո, որից Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի մասը 154 հազ. եվրո, ՀՀԳԱԱ-ինը՝ 36 հազ. եվրո: Հիմնական ծախսային հոդվածներն են՝ անձնակազմի վարձատրությունը, գործուղման ծախսերը, ծրագրի իրականացման հետ կապված ուղղակի ծախսեր (տպագրություն, թարգմանություն, հանդիպումների կազմակերպում և այլն) և մասնագիտացված ծառայություններ՝ ուղղված ՓՄՁ-ների նորարարական կարողությունների և միջազգայնացման ներուժի զարգացմանը (ներդրումային ծրագրերի մշակում, անհատական խորհրդատվության տրամադրում, մասնագիտացված դասընթացներ և այլն):

Ամփոփելով կարելի է նշել, որ Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից տարեկան նախատեսվող 40 հազ. եվրոյի դիմաց, մոտավոր հաշվարկներով 2016 թվականին մուտքերը նվազագույնը կկազմեն շուրջ 100 հազ. եվրո (համաձայն արդեն իսկ դրական եզրակացության արժանացած Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի ծրագրի, որի ֆինանսական նախահաշիվը կարող է ենթարկվել միայն ոչ էական փոփոխության), որից շուրջ 80 հազ. եվրոն Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի մասն է, իսկ 20 հազ. եվրոն ՀՀ ԳԱԱ-ինը: Այսինքն, անգամ լրացուցիչ ծրագրեր չունենալու պարագայում էլ արդեն իսկ Հայաստանի մասնակցությունը COSME-ին արդարացված է: